



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2014

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 57

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՈԹՔ

Ողորմէ ինձի, ո՛վ Աստուած, ողորմէ ինձի,  
որովհետեւ քեզի ապաւինեցայ.  
քու թելերուդ հովանիին տակ պիտի ապաստանիմ, մինչեւ անցնի պատուհասը:  
Բարձրեալ Աստուծոյ կ'աղաղակեմ.  
Աստուծոյ՝ որ իր օգնութիւնը կը դրկէ ինձի:  
Երկինքէն օգնութիւն կը դրկէ եւ կը փրկէ զիս,  
եւ կը նախատէ անոնք՝ որոնք կեանքիս կը սպառնան:  
Աստուած իր սերը եւ իր հաւատարմութիւնը կը ցուցնէ ինձի:  
Ազգերուն մէջ պիտի գովերգեմ քեզ, Տէ՛ր,  
ժողովուրդներուն մէջ պիտի ներբողեմ քեզ,  
որովհետեւ անչափ սերդ մինչեւ երկինք կը հասնի,  
հաւատարմութիւնդ՝ մինչեւ ամպերը:  
Երկինքներէն գերիվեր ես դուն, ո՛վ Աստուած,  
թող քու փառքդ անբողջ երկրի վրայ հաստատուի: Ամէն:

### ՇԱՐՄԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի քուտ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի զնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԸ



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԵԼԻՑ ԳԻՐՔԻ ԵՒ Ա. ԳԼՈՒԽ



Ելից գիրքը իր խորքով ամբողջությամբ Նոր Կտակարանը կը ներկայացնէ, որովհետեւ այնպէս կը ներկայացնուի ժողովուրդի մը վիճակը:

1. Ստրկական վիճակ, այսինքն՝ ծառայութիւն:
2. Ելք այդ ստրկութենէն:
3. Անապարային թափառումներ, այսինքն՝ փորձութիւններ:
4. Խոստացուած երկրին սահման հասնիլը:

Այս հանգրուանները նաեւ կը ներկայացնեն մեր կեանքի հանգրուանները.

1. Իբրեւ անհապ
2. Իբրեւ ամբողջութիւն

ա. Այնպէս ինչպէս Իսրայէլ ստրուկ էր Եգիպտոսի մէջ, այնպէս ալ մենք անհապապէս կամ հաւաքաբար ստրուկ ենք մեղքին:

բ. Այնպէս ինչպէս Իսրայէլ ազապագրուեցաւ Եգիպտոսի ստրկութենէն, նոյնպէս ալ Քրիստոս եկաւ մեզ անհապապէս եւ հաւաքաբար ազաբերելու մեղքի ստրկութենէն, ծառայութենէն: Այս ազապագրութիւնը րեղի պիտի ունենար Քրիստոսի մահէն յետոյ, այնպէս ինչպէս Ելից գիրքին մէջ այդ ազապագրութիւնը, ելքը րեղի պիտի ունենար զառնուկին զենումէն յետոյ:

գ. 40 փարիներու անապարային թափառումներ, այսինքն՝ փորձութիւններ: Այս երկու երեւոյթները կարծէք հակասական են: Ելք եւ թափառում՝ փորձութիւն: Անգամ մը որ ազապագրուեցանք այլ ինչո՞ւ փորձութիւններ: Աստուած այս գիրքին ճամբով կ'ուզէ սորվեցնել, որ այնքան արեւն Իսրայէլ փակաւին հասած չէր խոստացուած երկիր փորձութիւններ անպակաս էին: Նոյնպէս ալ մենք Քրիստոսով մեղքէն ազապագրուած ըլլալով հանդերձ, փակաւին այս աշխարհի մէջ ենթակայ ենք փորձութիւններուն: Այնպէս ինչպէս Քրիստոս պիտի յիշեցնէր: Փորձութիւնները կան ու պիտի գան, բայց դուք արթուն եւ պարտասար եղէք եւ զգոյշ, որպէսզի փորձութեան մէջ չ'ինաք: Ճիշդ է Եգիպտոսէն ելած են, բայց փակաւին խոստացուած երկիր հասած չեն: Միւս կողմէ, փորձութեանց ենթակայ ըլլալ, անպայմանօրէն, չի նշանակեր փորձութեանց ենթարկուիլ: Ենթարկուիլը մեր կամքէն կախում ունի: Կան բաներ որոնց ակամայ զոհը կրնանք ըլլալ:

դ. Խոստացուած երկրին սահման հասնիլը: Այս երկրաւոր կեանքի ընթացքին մեր ճիգը պէտք է ըլլայ խոստացուած երկիր հասնիլը: Այս աշխարհի վրայ մինչեւ սահման կրնանք հասնիլ, եւ այդ սահմանին հասնիլը մեր կամքէն կախում ունի: Ինչպէս այդ ժողովուրդը կրնար աւելի կանուխ մտնել խոստացուած երկիր, սակայն, որովհետեւ Աստուծոյ չապաւինեցան, եւ վախցան որ չկրնան փրկանալ այդ երկրին, որովհետեւ ըստ լրտեսներուն, հոն հսկաներ կային, հակառակ անոր որ Աստուած իրենց խոստացած էր, որ «ես պիտի փամ ձեզի այդ երկիրը», ոչ թէ դուք պիտի առնէք: Աստուած ալ դարապարտուեցան յաւելեալ 38 փարիներ թափառելու անապարին մէջ: Նոյնը նաեւ մեզի խոստացուած է այդ «Երկիր»ը, բայց նոյնիսկ քրիստոնէայ մարդը յաճախ կը շեղի եւ պարտասար չ'ըլլար մտնելու հոն, եւ մենք մեր կամքով յերադարձ կը կատարենք:

## Ա ԳԼՈՒԽ

«Եւ» ով սկսիլը ցոյց կու տայ կապը Ծննդոց եւ Ելից գիրքերուն, որ կը նշանակէ պարմութեան շարունակութիւնն է: Միւս կողմէ, կայ նաեւ կրկնութիւն: Այս կրկնութիւնը յարուկ է երբայական պարմելու ոճին, որովհետեւ այս գիրքը, եւ ընսահանրապէս այսպիսի գիրքեր ընթերցանութեան համար չէին այլ ունկնդրութեան: Որպէսզի լսողը միտքը պահէր եւ կապը սրեղծէր ընդհարումէ յետոյ, անոր համար ալ կրկնութեան ոճը կ'օգտագործէին, կարեւոր հարուածները յիշեցնելու: Այսպէս անուններու յիշարակումը ցոյց կու տայ թէ ոեւէ մէկը դուրս չէ ձգուած, բոլորն ալ այնպէս են, բացակայ չկայ: Թիւի յիշարակումը 70 հոգիներ էին, եւ համեմատութիւնը Եգիպտոսէն ելքի ժամանակ 600000 հոգի կռուող այր մարդիկ, որ կը նշանակէ ասով ցոյց կու տայ անոնց աճը եւ զօրանալը, որ նաեւ վրանգ կը սպառնայ Եգիպտոսին:

Հեքաբրքրական համեմատությունն մը կարելի է փեսնել այս աճման մէջ, երբ կ'ըսէ հապուածը, «Յովսէփ եւ իր եղբայրները մեռան: Եւ Իսրայէլի որդիները աճեցան ու շարցան»: Եթէ փորձենք փեսնել Յովսէփի փիպարին մէջ, ինչպէս փեսանք Ծննդոց գիրքին մէջ Քրիստոսի փիպարը, ապա կարելի է համեմատել այնպէս մը, որ Յովսէփի մահէն յետոյ եթէ շարան, թէ՛ եւ բնականէն պիտի շարնային, նոյնպէս ալ Քրիստոսի մահէն ու յարութենէն յետոյ նաեւ հաւաքացեալները պիտի շարնային: Քրիստոսի բառերով. «Յորենի հափիկը մինչեւ որ հողին մէջ իյնալով չմեռնի ինք առանձին կը մնայ, եթէ մեռնի շար արդիւնք կու փայ» (Յովի 12):

Գալով բռնութեան: «Եգիպտոսի վրայ նոր թագաւոր մը եկաւ, որ Յովսէփը չէր ճանչնար»: «Յովսէփը չէր ճանչնար» կը նշանակէ անոր միջոցաւ ժողովուրդին փրուած առանձնաշնորհումները սկսան առնուիլ, այն մտահոգութեամբ, որպէսզի չըլլայ թէ անոնք առաւել եւս աճին, գորանան եւ թշնամիներուն հետ ըլլալով Փարաւոնին վրայ յարձակին: Ահա այդ իսկ պարճառով Փարաւոն կը փորձէ աշխարանքի ու չարչարանքի փակ զանոնք ոչնչացնել, իսկ երբ չկրցաւ, միւս ձեւը որդեգրեց, նորածիններուն սպաննութիւնը:

Միւս կողմէ հեքաբրքրական արփայայտութիւնն մը, «որքան կը չարչարէին զանոնք, այնքան աւելի կը բազմանային»: Յաճախ նեղութիւնն ու դժուարութիւնը գորութիւն եւ փոկոնութիւն կը ծնին, այնպէս ինչպէս երկաթը ծեծելով պողպատի կը վերածուի: Եթէ այս դէպքերու երին Աստուծոյ կամքը կար, Փարաւոնը անգոր էր փոխելու:

Ահա նեղութեան լուծին փակ, Իսրայէլացիները Փիթօմը եւ Ռամսէսը շինեցին, որպէս Փարաւոնին շքեմարան: Այս անուններու յիշարակումը ցոյց կու փայ թէ Աստուածաշունչի պարումները պարզապէս հեքեաթներ չեն:

Փարաւոն մանկաբարձներուն հրամայեց որ իսրայէլացի արուները սպաննուին, բայց անոնք չհետեւեցան Փարաւոնի հրահանգին, որովհետեւ Աստուծմէ կը վախնային: Անոր համար ալ Աստուած իրենց փուներ շինեց: Այո, այս բանը ընելու համար սուր է որ կը խօսէին, որ սակայն, որպէս սուր երբէք ալ արդարացի չէ, բայց անոր դիմաց կայ ապաշխարութեան, գոջումի առիթը, որ միշտ ալ բաց է այդ դուռը: Այս իսկ պարճառով, Փարաւոն որդեգրեց մէկ այլ ուրիշ կերպ մը, այս անգամ մանուկները գետը նետելու: Այն ինչ բանով որ սպաննել պիտի փար մանուկները, նոյն ձեւով Փարաւոնի բանակը պիտի սպաննուէր: «Ինչ չափով որ չափես, նոյն չափով պիտի չափուիս»: «Պետրոս սուրը փեղը դիր: Սուր քաշողը, սուրով պիտի իյնայ»: Այն սուրով որ Գողիաթ կը սպաննէր, նոյն սուրով ինք սպաննուեցաւ:

Ի վերջոյ, այսպէղ յիշուած մանուկներու սպաննութիւնը պիտի յիշեցնէ Քրիստոսի ծննդեան օրերուն Բաթղեհէմի մանուկներու սպաննութեան: Եւ այնպէս ինչպէս Մովսէս պիտի ազարէր, որպէսի դառնար առաջնորդը Իսրայէլի ժողովուրդին Եգիպտոսէն դուրս բերելու, նոյնպէս ալ Քրիստոս ինք պիտի դառնար ճշմարիտ առաջնորդը ժողովուրդը դուրս բերելու մեղքի ստրկութենէն:

